

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
արեկան	7 "
վեցամսեայ	7 "
Արսասահմանի	
համար արեկան	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Անկերիկայի համար	
արեկան	3 ֆր.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցումն տողը ու
նույնին երեսին համար
40 սանթիմ իսկ վերջին
երեսին համար 20 սան-
թիմ է. երեքին աւելի
սանթիմերու համար
20 0/0 զեղջ կրչայ:

Հատկայի համար ձեռ
ք 40 սանթիմ է

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԻՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

համակ և գրամ
կիչ խմբագրութեան
աստիճան

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար

ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և չեմ
տրոյս

ՇԱՐՇՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷ ԵՐԱՇ-
ԽՈՒՆՈՐԵԱՆ ԱՕՅԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ-
ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փափաքողները կրնան
իրեն գիտել՝
Ձար-Պորիս փողոց Վառնա

Café Promenade
Vienne

Այս շքեղ սրճարանը կը գըտ-
նուի Վիեննայի Գրանդ Ժոսէֆ
քարափին վրայ. կը ստանայ զա-
նազան հայերէն թերթեր. Առ
հասարակ բոլոր հայ կամ արե-
ւելքցի վաճառականները այս
տեղ կը յաճախեն. Ուստի օտար
երկիրներէ եկող հայերը կը հրա-
ւիրուին գիտել հոս ուր պիտի
գտնեն իրենց յարմար գիւրու-
թիւնները և անհրաժեշտ տեղե-
կութիւնները:

ՎՈՐՈՆՅՈՎ — ՏԱՇԲՈՎ
ԵՒ
Հ Ա Յ Ե Ր Ը

Ամէն հայու աչքին զարնել
սկսած է այլեւս այն դառն հա-
կասութիւնը որ կը տիրէ կովկա-
սի փոխարքայ Վորոնցով-Տաշ-
քովի զանազան առիթներով
հայոց յայտնած համակրութեան
ու այն եպիսկոպոսի գերին մէջ՝
զոր ունեցան ու գեռ ունին կով-
կասի ուս իշխանութիւնները
հայոց հանդէպ. Այդ գերը այն-
քան անարգ, այնքան ակնյայ-
տօրէն զրգոհիչ ու թշնամական
է որ, գուցէ շատերու փնտռել
պիտի տայ տխրահաշակ կալիցի-
նի օրերը:

Ամենուս համար այլեւս կաս-
կած չի վերցնել սա իրողութիւ-
նը թէ՛ ուս կառավարութիւնը.
կովկասի մէջ, բացայայտօրէն
միացած է թուրք ու թաթար
վայրենիներու վոհմակին՝ ընդ-

դէմ հայոց, ու ոչ միայն այս
վերջիններուն դէմ կը գրգռէ
այդ վայրենիները, այլ զինուո-
րապէս ալ կաշակցի անոնց երբ
նեղը մնան. Միւս կողմէ կովկա-
սի իշխանութիւնները, ճիշդ հա-
կառակն ըլլալով, խուլ կը մնան
հայոց օգնութեան աղերսներուն,
տնհիմն պատուականով խոյս
կուտան, ու նրբ հայերը իրենք
կը խմբուին ինքզինքնին պաշտ-
պանելու, ցարիվմի տխուր գոր-
ծակալները անոնց դէմ կը ցցեն
կողակը ջախջախելու համար
այդ անհաւատարիմ ու սերարա-
դիտ տարրը, որ կովկասի մէջ
հայկական անկախ թագաւորու-
թիւն հիմնելու կաշխատի:

Այս կոտորածները պատահա-
կան երեւոյթներ չեն. այլ կան-
խապատրաստած, ծրագրուած
բնաշնչումի քայլեր, ինչպէս է-
ին թուրքիոյ կոտորածները:

Կալիցիներն սխտէմ ան-
յաջող ու անյարմար դուրս եկաւ
կովկասի նախորդ կառավարիչը
հայերը բնաշնչ ընել կուզէր
զանոնք բարոյապէս մեղսելով
նախ. ասոնցմէ խլելով դպրոց,
պատմութիւն, լեզու, եկեղեցի,
թերթ, գիրք, այն ամէն բա-
ները վերջապէս, որոնք ազգի
մը կենսական ուժը և զայն միշտ
կանգուն պահող բարոյական հի-
մը կը կազմեն. Բայց այս պարա-
գային ուս կառավարութիւնը
ինքն էր որ ուզակի պայքարը
կը մղէր և հետեւաբար ատելի
կըլլար թէ տառապող հայ ժողո-
վրդին և թէ նոյն իսկ ուս խո-
հական դասակարգին ու ներպա-
յի ազատամիտ ազգերուն:

Այս քաղաքականութիւնը ան-
նպատակ եղաւ ցարիվմին. Ու ա-
հա եկաւ Վորոնցով-Տաշքովը,
կեղծաւոր, փարիսեցի, կատար-
եալ ճիւղիթ, սուտ հայասէր,
իսկական գայլ մը հայոց համար
ոչխարի մորթին տակ պահուած.
Իր գալուստը աւետուցաւ մեզ
Ռուսահայոց եկեղեցապատկան
կալուածներու վերադարձման
խօստումով, ինչ որ իրագործ-
ուեցաւ ալ. բայց մինչդեռ փոխ-

արքան Ինթերսպուրկէն այդ ա-
ւետուր կուտար հայութեան,
միւս կողմէ Թիֆլիզ ոտք կոխե-
լուն պէս, կովկասը սպանդանո-
ցի մը կը վերածուէր հայութեան
համար. Այդ ինքզինքը հայա-
սէր կոչող ու համակրական խա-
րբայ ու ճիւղիթական ցոյցեր
ընող փոխարքան ոչ մէկ լուրջ
կանխարգել միջոց ձեռք չէր առ-
նել կոտորած սպաննացող վայ-
րերու վրայ, երբ այդ կողմե-
րու հայերը հեռագրով կամ հե-
ռաձայնով իրեն կը դիմէին նախ-
օրօք տիրող սպաննալից վիճա-
կը պարզելու համար. Ու նոյն-
իսկ Թիֆլիզի դէպքերու վաղոր
գայնին, ինք անձամբ, պաշտօնա-
պէս կը հեռագրէր Ինթերսպուրկ
թէ՛ խառնակութեանց ու սպանու-
թեանց տեղի տուին իրենք հա-
յերը. Հոս այլեւս իր սեւ հոգին
իր ատելութիւնը հայոց դէմ,
մերկացած կեղծիքն ու ճիւղիթ-
ութեանն, բացայայտօրէն կը
պարզուէր, ու մարդ ու պուշ ըլ-
լալու է այլեւս հատալու կամ
խարուելու համար Տաշքովի կեղ-
ծաւորութիւններէն:

Ռուսահայերը պէտք է համոզ-
ուին որ փոխարքան ալ նոյնքան
փաստակար ու զուելի թշնամի
մըն է հայոց որքան իր նախորդը
Կալիցին իշխանը. նոյն իսկ անի-
կա կալիցիներն աւելի վտանգա-
ւոր է, կարծենք, իր երկրամի
ու քննաքննող ուղղութեամբ. Պէտք
է Ռուսահայերը գիտնին փոխար-
քային ու պարզեն իր բռնած
երկրամի քաղաքականութեան
հետեւանքները, որով մէկ կող-
մէ համակրութիւն կը յայտնէ
հայոց և միւս կողմէ թոյլ կու-
տայ որ ամէն կողմ ջարդուին ա-
նոնք նոյնիսկ իր զինուորներէն
ու կողակներէն. Եւ եթէ շատա-
նան իրենց ակնկալած գոհացու-
մը, եթէ տեսնեն որ փոխարքան
միշտ ծածուկ թշնամի մը կը մը
նայ հայերուն. այնժամանակ ի-
րենք ալ պէտք է խորհին իրենց
օձիքը ազատել անոր ձեռքէն,
այնպէս ինչպէս որ ազատեցին
Կալիցինի ձեռքէն. Թուրու.

թեամբ, անգործութեամբ, քիչ
քիչ պիտի տեսնենք որ երբեմն
հայաշատ ու բարգաւաճ կովկաս
ու Արարատը ամայացած, ան-
մարդացած, գատարկուած է
իր հարազատներէն և այլեւս հա-
յութիւնը կովկասի ոչ մէկ կէտին
վրայ մեծամասնութիւն մը կը
կարողանայ կազմել ձայն և
ուժ ունենալու. համար մտակայ
սահմանադրական Ռուսիոյ տրիս-
րահաշակ Տոմային մէջ:

ՇԱՐՇՈՒՄ

Ա Ն Գ Լ Ի Ո Յ

ՆՍՐ ՍԶՍՏԱԿՍԸ ԲՍՐԼԱՄԷՆԹԸ

Քանի մը օր եւս, և ահա իր վախ-
ճանին կը հասնի անգլիական նոր
բարլամէնթի ընդհանուր ընտրու-
թիւնը:

Այսպիսի եզակի, հետաքրքիր ու
հոյակապ տեսարան չէր ներկայացու-
ցած երբէք բարլամէնթական ընդ-
հանուր ընտրութեանց պատմութիւնը:

Դեռ միայն 1900-ի ընտրութեան,
(ամենավերջինը՝ բացի ներկայէն), իւն-
եօնիսդ ու պահպանողական, երես-
փոխան. ժողովին մէջ ունէին առա-
ւել ձայն քան Ազատականներ, բան-
ւորներ ու իրլանտացի ազգայնա-
կաններ իմիասին եւ երբ ներկայ
տարուան Յունի 8 ին լուծուեցաւ
հին բարլամէնթը, ընդհանուր 670,
անդամները (մէկը նախագահն է) կը
բաժնուէին հետեւեալ կերպով.

Պահպանող. և իւնեօնիսդ	369
Ազատական	208
Բանւորական	15
Իրլանտ. Ազգայնական	82

Բարձրագատիւ Արթըր Ճէյմս
Պէլֆորթ-նախկին նախարարապետի-
հրաժարումը, հակառակ Մր. ձօնէֆ
Չէմպրլէնի բարի խորտններուն, ան-
խուսափելի բան մըն էր: Պէլֆորթ,
տարտամ ու անորոշ կամքի տէր մէկն
էր, անյարմար նման տաղնապալի
չըլան մը կառավարելու, և թերեւս
չա՛տ առաջներ տար իր հրաժարականը
եթէ չունենար ետին զինքը մղող
մը. ատենուան մը անիշխանական,
ապա ազատական, ապա բրոքէքը-
նիսդ, ապա թառիֆ Ռէֆորմիսդ եւ
հուսկ ուրեմն ֆիսքըլիսդ Չէմպրլէյնը
յամառ ու անխոնջ հրապարակախօս
մը, ամէն օր նորանոր խնդիրներ
յուզող, որ հարաւափրկիկան ձախաւեր

պատերազմէն վերջ պարտաւորուած ըլլալով հրաժարուիլ գաղթողին մի նիստուրութեան պաշտօնէն, այնուհետեւ իր նորակերտ յղացումները կը բեռնաւորէր ընկճուած Պէլֆօրին վրայ՝ որպէսզի ան յառաջ վարէ ։

Ու երեւան բերաւ Ֆիւրքը Բօլխի (Եւլմտական Քաղաքականութիւն)աւնուին տակ իսլամական բրոզէքընիզմի ծրագիրը, որով կուզէր արտասանանէն եկած ամէն ապրանքի վրայ մաքս դնել, օտար ներմուծումները կարելի եղածին չափ ետ մղել, հարկերը աւելցնել, և այլն, այնպէս որ ժողովուրդը ստիպուեցաւ հացէն ու շաքարէն սկսեալ ամէն մէկ առարկայի յաւելուածական գին մը տալ, Այս ֆիւրքը Ռէլֆօրմի անբան զրուածները զայրացուց ամբողջ եւ ըողոքները բարձրացան ամէնուրեք... Ի դժուր շրջան կողմ կը վաղվառէր Չէմպրլէյն՝ հայրենակիցներուն օտարատեսց բնազդը շոյելու և ցոյց տալու Փոփ Թոնէյտ (ազատ փոխանցման) ազգափնաս սխտեմը և, համեմեւելու համար իր ճարտասանութիւնը, որ շատ հասարակ տեսակէն ալ չէ՛, օրինակ կը բերէր անգլիացի անգործներու հսկայ թիւը, որոնք արգելուք կը ներկայացնէր արտաքին ապրանքներու ազատ ներմուծումի գրութեան ։ Լոնտօնի փողոցները, ինչպէս և այլուր, պատերը ողողուած էին օտարատեսցութիւնը գրգռող պատկերներով, ուր կը ցուցնէին օտար բանւորները, մասնաւորապէս Գերմանացի, աժանագին աշխատանքով անգլիացիին ապրուստը գողցող ուր անգլիացի բանւորին ընտանիքը մէկ կողմ անօթի կը գալարէր, իսկ միւս կողմ օտարականը կը հրճուէր անոր թշուառութիւնով, եւ այլն ։ Անգլիացիները Եւրոպայի է՛ն չօվինիստ ժողովուրդն է եւ Չէմպրլէյն ու իր համախոնները ատոր էին վստահած, սակայն յուսախար ելան, Վրայ հասան ազատականները, պարզեցին պահպանողական կառավարութեան երկրին հասուցած տազնապնելը, մասնաւորապէս Չէմպրլէյնի խաղերը՝ յառաջացնելու համար պօէրներու հետ անմիտ պատերազմը, գծելին այն աղէտալի փնասները որ կրեց Անգլիա, պատկերացուցին այն ահռելի վախճանը որ կսպառէր Չէմպրլէյնի նոր ծրագրի ներմուծման ու ժողովրդին համոզումները տակաւ փոխուիլ սկսան ։ Աւելցան ատոր շարք մը այլ յարակից գէպեր, որոնք, միանալով յառաջ բերին անբեւակայեի հոսանք մը զէպի Ազատականութիւն... Ասկէ բաւական ատեն առաջուան կողմնակի ընտրութիւնները (պայէլէքըն), արդէն կը նախագուշակէին ապագայ ազատական յաղթանակ մը, սակայն, ոչ պահպանողականները կը յուսային այս ատիճանի իսլամական ջախջախում եւ ո՛չ ալ ազատականները կերպագէին այսպիսի մեծ յաղթանակ ։

Երբ ազատականներու ուսմիրա Սըր Զէնրի Բէմպրլ-Պէլքըմէն նախարարապետ ընտրուեցաւ էտուարտ Է. ի կողմէ, թօրիններ հռչակեցին այդ անճարակ յաղթանակ, որովհետեւ ընդհանուր ընտրութիւնէն առաջ էր, եւ, որպէսզի մարեն իր արժանիքը յաջս ժողովրդին, սկսան ներկայացնել զայն—նոյն Չէմպրլէյն անձամբ— իբրեւ «Լիզըլ ինկլինտըր», աւելցնելով որ կը «գարչէր», որովհետեւ կը հետեւէր ան «Փոքր Անգլիոյ» քաղաքականութեան, —այսինքն՝ մէկը որ գաղթականութիւններով շատ չը

զբաղիր այլ բովանդակ ու չը կը դարձնէ Մայր-Հայրենիքին վրայ, Ըրին վերջապէս ի՛նչ որ հնար էր նըսեմացնելու ձախակողմաններու այս առաջին մեծ յաղթանակը, մինչեւ օրը եկաւ Ընդհ. ընտրութեան ։ Պէլֆօր ու Սըր Զէնրի քան տիտազրուեցան Մանչեսթրի ու, նախկին նախարարապետ Պէլֆօր, անմտանալի հարուածը ստացաւ առեւտրական այս հսկայ կեդրոնին մէջ՝ ստանալով 1430 նուազ ձայն քան ազատական լիտըրը ։ Եարուստուեցաւ քուէարկութիւնը, Այլ ու ձախ պարտութիւն պահպանողականաց, Պէլֆօրի հին քապիտէթի անդամներէն երկու հատ հազրւ վերընտրուեցան ։ Միակ ընտրուած ազգընդիկ հին նախարարը Չէմպրլէյնն է որ ի սկզբանէ կրցած է նիստ մը գրաւել Բարլամէնթի մէջ՝ քանտրտա գրուելով իր բնիկ քաղքին, Պրոմիլիզմի, ուր ունի համախոններու ամբողջ և միակ բանակը և որոնցմէ կընտրուի միշտ Գաղթային, Ֆինանսական, հողագործական, պատերազմական և այլ բազում նախարարներ պարտուած են ։ Այս ցոյց կուտայ անդիլիացի ժողովրդի իր չահերուն գիտակցութիւնը ։

Ներկայ ընտրութեան է՛ն աչքառու կէտը բանւորական է, Անոնց տարած յաղթանակը բողոքովին անսպասելի էր, Սակայն կըսուի թէ բազմամիլիօն Գառնըկի բաւական դեր ունեցած է այս վերջնայն յաջողութեան մէջ՝ հատուցանելով ընտրութեան ծախսերու բեռը ։ Ասոնց վէթէրան զրոյակակիլն է Պրոնս, ժամանակին պարզուկ բանւոր մը, որ 1888էն ի վեր միշտ նիստ գրաւած է Բարլամէնթի մէջ եւ բանւորական շահերը պաշտպանած ։ Հակառակ թուեղ ընկերակալականներու պզտիկ խմբակի մը գաճաճ զրպարտութեանց որով կը ներկայացնէին սոյն պատկանելի զէմքը «դաւաճան» «կարգուրաց» մը, որովհետեւ Գէմպրլ-Պէլքըմէնի շնորհած բաւձր աստիճանը ընդունած էր, ան վերընտրուեցաւ իր շրջանակէն, Պէլքըմի, եթէ չեմ սխալիր, մօտ 5000 ձայնի առաւելութիւնով ։ Այժմ Անգլիոյ ներկայ երեսփ. ժողովը (Հաուսով Գոմընս), բաղկանալու է 670 անդամներէ (հաշուելով սփթըլը) ։ Վերջին պահուս 666ը միայն յայտնի է, իսկ մնացեալ երեքը, որ շատ կարեւոր մասերու չեն պատկանիր, պիտի գիտցուին քիչ ատենէն ։

Ահա 1906 Յունվարի ընդհանուր ընտրութեան արդիւնքը ։

Ազատական 378
Իսկուր 49
Ազգայնական 84
Պահպանողական 155
Որով, ազատականները կը շահին 1900ի վրայ 194 նիստ, բանւորները 38 ազգայնականները 2, իսկ պահպանողականները կը կորսնցնեն 214 նիստ ։ Փետր. 13 ին պիտի բացուի Բարլամէնթը՝ ընտրելու Սփթըրը (նախագահ) և կատարելու նախնական պատրաստութիւններ փետր. 19 ի համար, երբ թագաւորը ինքնին պիտի հանդիսաւորապէս բանայ վիճաբանական ժողովներու նիստը եւ կանոնաւոր ընթացքի մէջ զնէ նոր Բարլամէնթը ։

Թողով ուրիշ առիթի մը Ազատական կատարելութեան բոնելիք զիրքը արտաքին քաղաքականութեան մէջ, ինչպէս եւ ընկերվարական մամուլին գիրքը հանդէպ ազատական բաղամէնթին, հոս պիտի

զնեմ հետեւեալ յաւելուածական մանրամասնութիւնք ։

Նոր Բարլամէնթի 670 ընտրականներու մէջ կը գտնուին 105 փաստաբան, 75 անկախ գիրքի տէր անձնաւորութիւններ, 130 ի չափ առեւտրականներ ու վաճառականներ 41 գրագէտ ու ժուռնալիստ, 14 թերթերու սեպակականատէրեր ու հրատարակիչներ 44 բանակային ու 2 նաւային սպաներ, Ութի մօտ թիւ մը կը կազմեն գիտնականներ ու քրօնաբաններ, կայ 10 բժիշկ, 11 նպարավաճառ, 10 սեղանաւոր (պանքիէր) 10 ֆինանսիստ, 7 ոգելից ըմպելիներ ու գարեջուր պատրաստող 4 ճարտարապետ 2 հաշուագէտ և մէկ դեղագործ ։

Բանւորական բաժնին մէջ կան 14 հանքափորեր 13 ագարակապաններ և 9 հանքատէրեր ։

Կան ստոնց մէջ այնպիսիներ՝ որոնք իրենց կեանքի ասպարէզը սկսած են շատ շնչին գործաւորութիւնով սակայն հարկ կա՞յ փաստելու թէ՛ գիրքն ու գրամը չեն մարդը արժանացնող յարգանքի ու գնահատման ։

Մ. Յոլակ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՖԻԼՊԷ, 21 Յունուար

Ինչպէս արգէն ժամանակին ալ գրած եմ ձեզի, այս տեղի կարգ մը ինչնակոչ յեղափոխականները անընդհատ պայքար կը մղեն «ճարժու» ու անոր յարգելի խմբագիր պ. Վարդոյի ղէմքէն առիթ չեն փախցնելու վրայ վարկարկելու համար մեծով պլտիկով ։ Մեծերը պլտիկներու առջեւ ինքզինքնին սուղ ծախելու համար «չարժեր» այդ ինկած մարդով զբաղիր՝ յաւիտենական բանաձեւը կը մոմոտն, բայց իրենց անմիջական սակէն գնեք իսկոյն՝ անոնց ետեւէն կը զրկեն որպէսզի Վարդոյի ղէմ իրենց բոլոր թոյնն ու մաղձը թափեն ։ Այս տողերը մենք չի պիտի ուզէինք գրել, եթէ մեր աչքով չի տեսնէինք թէ այդ զլուելի տիպաբները որքան կը ստորնանան, կը քծնին, կը ցածնան միամիտ գաւառացի մը համոզելու համար թէ՛ Վարդոն գէշ մարդ է ու իրենք են ճշմարիտ յեղափոխականները՝ ձիւպանները ։ Յեղափոխութեան համար մատերնուն ծայրն իսկ չեն արիւնած, ու տարիներով յեղափոխութեան սիրուն շարժիկ ուսած, բանտարկուած, ու արտորուած իրապէս ճշմարիտ յեղափոխականի մը անունը կը պղծեն աւանց խղճի խայթի, լուկ իրենց դձուձ եսին գոհացու մը ստանալու համար ։ Մարդկային զայրոյթը իր գագաթնակէտին կը հասնի կոր այլեւս ասանկ ստորաքար յարկարներու հանդիպած ատեն ։

Այս տողերը ինձի թելագորդը հետեւեալ ինքնին անկարելոր

բայց նշանակալից միջոցէպն է ։ Վերջերս ընկեր պ. Վարդոյի մերկայացումներէն աչքը բացուած Գաշնակցական Հայաստանցի ընկեր մը մոյլի ջոյի մը հետ վիճաբանութեան կը մտնէ ։ Այս վերջինը ամէն ինչ վարդագոյն ցոյց տուով, Գաշնակցութեան գործած հրաշալիքները կը բացատրէ կովկասի մէջ՝ ընդհանրապէս և թիֆլիզի մէջ մասնաւորապէս ։ Ի միջի այլոց պարծենալով որ Վարդոյի նման արարածներ որքան ալ ուզեն Գաշնակցութիւնը վարկարկել և կարելոր ընկերները սեւցնել (խօսքը Վաւաճանի և քոնսօրի մասին է), չեն յաջողիր... Հայաստանցի ընկերը պնդարիւնութեամբ մտիկ ընկել ետք, ճառասօսին կը պատասխանէ թէ աշխարհի մէջ իրենցմէ սուելի վատ ու ստոր մարդ չի կրնար գոյութիւն ունենլլ ըսնի սրդեա երեկ իրենց պաշտած ու իբր մեծագոյն յեղափոխական ներկայացուցած Վարդոն, այսօր ելեր նորէն իրենք իրենց բերնով գետնէ գետին կը զարնեն, միմիայն անհատական կիրքէ ու թշնամութենէ մղուած ։ Ու միամիտ գաւառացին զգուանքով կը հեռանայ այդ խարբբուներու գաշնակցութենէն ։ Ու այս մարդիկը կը հաւակնեն թէ թերթի հիմնած են «ազգային համբարախութիւն» ու մերձեցման կապ՝ ըլլալու համար... ։

— Անցեալ օր կարդացի որ «Արշալոյս» էն իրենց թերթին մէջ քալուած քեր ընկու տտեն, թիֆլիզի ղէպերուն վրայ խօսելով, այդ տեղի հայոց ինքնապաշտպանութեան գործը այնպէս մը ըրած են որ միմիայն գաշնակցականներու կողմէ եզած ըլլալը հասկնայ ընթերցողը, խեղճուկ արարածները, կերեւայ թէ, կարծեր են որ «Արշալոյս»ը միայն իրենց կողմէ թիֆլիզի մէջ ու անգամ մըն ալ քշելու ելեր են ։ Ողորմօյի մարդիկ, իսկապէս, ձեր գաշնակցականները պոլ պոլ թոնցիկ հանցին թիֆլիզի մէջ, երբ անդին Հնչակեան խումբերն էին որ թաթարներու ղէմ հերոսաբար կը կուռէին ։

Աչքերնին կուրացա՞ւ միթէ տեսնելու համար նոյն այդ «Արշալոյս»ին մէջ այն ընդարձակ մանրամասնութիւնները, որոնք թիֆլիզի մէջ բացառապէս Հընչակեաններու կատարած հերոսական գերը կը պարզէին քաղաքին պաշտպանութեան համար ։ Եթէ ուրանար ու ստէք, «Արշալոյս»ին թիւերովը ու հատուածներովը մէջտեղ պիտի գամ ձեր կեղծիքը ջախջախելու համար ։ Ու զուք էք որ «ազգային համբարախութեան» ու մերձեցման կապ՝ ըլլալ կը հաւակնիր... ։

ՄՊՏԵԱԼ

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆՔԻ ՄԷՋ Է՞՞՞...

Այսպէս են սկսել բացագանչել այժմ Ռուսաստանի այն բոլոր թերթերը, որոնք գիտակից երկրի զարհուրելի դրութեան ակնատես անցած-գարձածին, վրդովուած ղէակիւնայի ակներէն քայլերից հրաւիրում են ընտր յառաջագէտ տարրերին իմի ձուլուել՝ վտանգի դէմն առնելու համար՝ եւ վտանգը, յիբաւի, մեծ է շոկտ. Կի մանիֆէստը իր բոլոր կէտերով մի առ մի հակադարձ կերպով է գործադրուում, Մամուլի եւ խօսքի ազատութիւնը, մի նոր օրէնս դրութեամբ, ճշտուած է նոյնքան, որքան առաջ էր, փոխուած են մի այն աշուններ, փոխուած է դատարանը, սակայն խտուութիւնները եւ պատասխանատուութիւնը նոր կերպարանքներ տակ մտած՝ աւելի ծանրանում են, Միութիւնները եւ ընկերակցութիւնները ազատութիւնը, մի ուրիշ օրէնսդրութեամբ՝ հաւասարեցնում են զերօր, անձի անձեռնմխելութիւնը ամէն յայտնի խախտում է ձերբակալութիւններով, խուզարկութիւններով եւ, որը գլխաւորն է, լայնածաւալ պետութեան մէջ քաղաք չէ մնում, որ չնկրուի մարդկային արիւնով, որ չաւերուի ու չըթայանուի յանուն «կարգ ու կանոնի», յանուն «հայրենասիրութեան» եւ այն՝ ուստիկանութեան եւ իշխանութիւնների քաջալերութեամբ...

ներ, սակայն Դուրնուօն պահանջ է գրել որ այդ քննութիւնների արդիւնքը նախ իր ձեռքի տակ մնայ անհրաժեշտ ընդհանուր ղարկում, որպէս խախտումն իր իրաւունքների հրաժարուել է նախարարութեան պաշտօնից... Դուրնուօն... Մի անձ, որ անա մի ամիս է, ամբողջ երկիրն է քայքայուում, որ ղէակիւնայի ամենաջերմ պաշտպան, առաջարկում է նախարարական խորհրդի մէջ՝ թող տալ իրան գնդակներով ու խմբային աքսորումներով խեղդել ազատութեան քայլերը եւ որ Պէլեգի քաղաքականութեան նախանձախնդիր՝ կամենում է զարթնող առիւծի ուստումներին արեան հեղեղներով արգելք դրնել... —Այդ ինչն էր են կատարում ձեր երկրում... ասել է կլէմանտին «Բուսթիբերթի մի թղթակցին... կատարեալ կառավարչական անխիստութեան մէջ է Ռուսաստանը: Անորոշութիւն, չփութ՝ անա ձեզ կոմս Վիտտէի ղէժմը: Միթէ՛ նա չէ ըմբռնում, որ կրատար արտօնութիւններով ոչինչ չէ կարելի անել, իսկ ձեզնում ամէն բանի մէջ—կրատար արտօնութիւններ, ոչ միայն այդ, այլեւ երեկւայ տըւածը այսօր ետ են վերցնում... «Որպիսի՛ խոշոր սխալ է Վիտտէի կողմից—չարունակում է կլէմանտին—ընարել իրան օգնական՝ ուստիկանութեան մի չինովիկ (ակնարկում է Դուրնուօնին) Որպիսի խոշոր ձախուղութիւն, անճարակութիւն»... Եւ այդ խոշոր անճարակութիւնը Վիտտէն յամառ կերպով շարունակում է, մինչեւ իսկ յայտարարում է ո եթէ «ուստիկանութեան այս չինովիկին» հրաժարեցնեն, ինքն էլ հրաժարական կը տայ, որ եթէ պոստ-հեռագրական գործադուլին գոհացում տրուի, ինքը—Վիտտէն կը թողնի

իր «գործունէութիւնը»... Ու Վիտտէն բռնել է ղէակիւնայի կորստարբեր, աւերիչ, արիւնահեղ ուղին, Երկիրը ծայրից ծայր տակն ու վրայ, պետութեան ելեւմուտքը քար ու քանդ, զանձարանը սնան կութեան նախօրեակին... «Սխալուած են ձեր նախարարները—ասում է կլէմանտին նորից—սխալուած են, եթէ մտածում են, որ Վիտտէի անուամբ կարող է հաւասար ներշնչել արասասմանում՝ փոխառութեան համար... Դա անցաւ, այժմ այլեւս փոխառութեան համար խօսք չէ կարող լինել, եւ ոչ մի կոպեկ այլեւս չեն տալ Ռուսաստանին»... Յիրաւի, ներկայ կառավարութեան վարիչ այնքան արդէն ընկել է, որ փոխառութեան բանակցութիւնները համար Ռուսաստան եկած օտար զրամատէրերի ներկայացուցիչները, մինչեւ յետինը, թողել հեռացել են երկրից: Միւս կողմից, ներսում երկրի մէջ յուզումներ՝ մինմեանցից սաստիկ—գիւղացիական զինուորական, ամեն, ամէն տեղ... (Շարունակելի)

մակը և թղթակցութիւնը ստացուած չէ: ՄԱՐՍԵՅԸ.— Պ. Ա. Ս. Ձեր նամակի համաձայն քանի մը թիւեր փոստին յանձնեցինք: ԱՄԵՐԻԿԱ Լօզ Էնճըլս.— Պ. Վ. Վ. յաջողութիւն ձեզի, զրամը բաւ է, Այն թիւերէն կը ղրկենք յաջորդաբար: ՍԱՒՄԱՍՍ.— Պ. Չ. Ա. կը շարունակենք ղրկել թերթը, պարզեցէք ձեր նամակը:

ՄԱՐՍԵՅԸ

Տարեկան	7 րոպ.	18 Փր.	14 մարտի,	14 շիւկ.	7 րոպ.
Վեց ամիսը	4 րոպ.	11 րոպ.	9 րոպ.	9 րոպ.	4 րոպ.
Ներքե ամիսը	25 րոպ.	7 րոպ.	6 րոպ.	6 րոպ.	2 րոպ.
Մէկ ամիսը	15 րոպ.	3 րոպ.	2 րոպ.	2 րոպ.	1 րոպ.

Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս հասցէ՝ խմբագրութեան «Արշակունի» թերթի կողմից:

ՀԱՅ ԳՐԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ Լ Օ Ջ Է Ն Ը Ը Լ Ս Գրադարանիս նպատակն է յառաջդիմական գաղափարներ արարածել տեղւոյս հայ գաղթականութեան մէջ, կը խնդրենք հայ թերթերէն որ աջակցին մեզի մէյմէկ օրինակ նուիրելով գրադարանին: Հասցէ՝ tArmenian Book Lovers' Union 412 Temple S. Los Angeles U. S. A.

Օ Գ Թ Ա Վ Մ Ի Ր Պ Օ

Ա Պ Պ Է Ժ Ի Ի Լ

Բ. Մ Ա Ս (Հատուածներ)

Երբ դուրսը օդը գէշ ըլլար հօրեղբայրս իրեն քով կը կանչէր զիս: Ես կը նստիի փոքրիկ սեղանին առջեւ ու բարձրաձայն կը կարդայի: Կը կարդայի ամէն բան, «Գիրք ժողովրդիսն» մինչեւ Սթուարթ Միլլ, Սուրբ Օգոստինոսէն մինչեւ Օկլիւսթ Գոնթ: Ամէն անգամ, հօրեղբայրս, ինչպէս երբեմն մարդոց նոյնպէս այս գիրքերուն յայտնած կարծեացը գէտ իր զայրոյթը կարտայայտէր միեւնոյն ժեսթներով ու միեւնոյն բաներով: Գաղափարներուն հետ կը վարուէր կենդանի անձնաւորութեանց պէս, անոնց կռուի ցոյց կուտար, ու անոնց անամարժիտ պատկերին ղէմ կը ժայթքեցնէր իր կատաղութեան փրփուրը, սա յախտեանական նախատիւնով: —Ապու... շշնճի:

հոգը ապագային ձգելով, իսկ ես կը շարունակէի իմ տարօրինակ ուսումս: Օր մը Արթուր Գարսեալ իր մատենադարանը տարաւ զիս, ես իմ սովորական սեղանստայ, փոքրիկ սեղանի մը առջեւ, ուր, տասներեք տարեկան հասակիս մէջ, ամբողջ մարդկային փիլիսոփայութիւնը կարդացած էի: Յախուռն, անհամբեր շարժումներով հօրեղբայրս կը պրպըտէր հսկայ գիրքերու կոյտ մը: Գոցէ դեռ ինձի անձանթ փիլիսոփայութիւն մը էր փնտռածը: Տարտամ երկիւղ մը կը զգայի այստեղ գալուս: Հօրեղբորս կոնակը չեմ գիտեր ինչ արտասովոր բան մը ունի, որ չէ՛ կարգէ վրաս, իր ձեռքերը իսկապէս զիս կանհանգստացնեն, կերթան, կուգան, աներեւոյթ կըլլան: Վերջապէս փնտռածը գտաւ, Պլատոնի գիրք մըն էր, կարմիր կողքերով, աղտոտ, պատռած, կարերը քակուած, Յայտնի էր թէ շատ գործածուած էր... Հօրեղբայրս արագօրէն թերթերը կը դարձնէր, յետոյ կը կենար վայրկեան մը, յետոյ նորէն կը սկսէր դարձնել, այս անգամ աւելի արագ... —Ահա, ստիկ... գտա՛յ... Յետոյ, լայն ձեռքը գրքին երեսին քսելով զայն սեղանին վրայ դրաւ ու եղունգի գծով մը ցուցուց կարդալիք տեղս: —Կամաց, կամաց պիտի կարդաս... Նշան ըրածիս պէս սկսէ... Մինչդեռ թիկնաթուին վրայ կը

նստէր, ոտքերը երկնցուցած շիփշիտակ, ես աչք պտըտցուցի գրքին կողքին վրայ ու գրուած տեսայ. «Ինտիանա» հեղինակ Ժօրթ Սանտո բառերը: Ժօրթ Սանտո... ու յիշեցի որ հայրս յաճախ կը խօսէր Ժօրթ Սանտոի մասին... Չայն թատրոնը տեսած էր, Գէշ կին մըն էր որ միշտ էրիկ մարդու հագուստ կը հագնէր ու ծխափողով կը ծխէր... Ժօրթ Սանտո... Ու կաշխատէի միտքս բերել հօրս պատմած յատկանշական պարագաները այս կնոջ մասին... Անպատճառ «Ինտիանա»ն այն գիրքերէն էր որուն մեր տան մէջ պէտքուտեղ կուտային, այսինքն արդիւնուած, սարսափելի բան մըն է, ու սկսայ զգնել սոցիւս գրուած գիրքը սարսափով խառն հետաքրքրութեամբ մը: —Սկսէ, ըսաւ հօրեղբայրս... մանաւանդ յամբօրէն, Ակնարկ մը նետեցի նախ արքային վրայ, աչքերը փակ, բազուկները յենարաններէն դուրս առկա խած փռած էր, իր կուրծքը կիշնար ու կուռէր փսոցի մը պէս... Սկըսայ ընթերցումս: «Նուն կը հեծէր արտասուազին, իր ճակտին ծաղիկները փրցուց, իր երկար մաղբը թափեր էին ցիրուցան լայն ու փայլուն ուսերուն վրայ: Եթէ, Տիկին Տէլմալ իր գերութեամբ ու տառապանքներովը գեղեցկացած չըլլար, նուն այս վայրկեանիս անհունապէս գերազանցած պիտի ըլլար զայն գեղեցկութեան մէջ:

վրտն ու սէրը զայն հրաշագեղ ըրած էին: —Աւելի կամաց, ըսաւ հօրեղբայրս, շատ կամաց.— ու աթոռին վրայ ալ մի շարժիր: «Բէյմօն յաղթուցու ու զայն իր բազկացը մէջ քաշեց, իր քովը նստեցուց, բազմոցին վրայ, միտասնին մօտեցուց, որուն վրայ սրուակներ շարուած էին, ու նարձածազկի յուրէն քանի մը կաթիլ հրամցուց անոր ոսկեգոծ արծաթէ զաւակին մը մէջ, նոյն զովացուցիչ ըմպիլիէն աւելի իրմով հետաքրքրուելուն այս ապացոյցէն միւթարուած, արցունքը սրբեց ու Բէյմօնի ոտքերուն փաթթուելով: «Սիրէ զիս նորէն, ըսաւ, անոր ծունդերը գրկելով կըքտօրէն, ըսէ ինձի անգամ մըն ալ թէ կը սիրես զիս ու ես պիտի բռնկուիմ, պիտի փրկուիմ, Գրկէ զիս ինչպէս կընէիր երբեմն, ու քեզի քանի մը օրուան հաճոյք պատճառելու համար, եթէ կորստեան մատնուիմ, ցաւ չի պիտի զգամ: —Կեցիր, ըսաւ հօրեղբայրս, մանկան հեւքի նմանող ծանր ու խուլ ձայնով մը, կեցիր: (Շարունակելի)

Հ Ր Ա Ւ Է Ր

Ընթերցարանիս վարչական ժողովոյ անդամոց մեծամասնութիւնը հրաժարած ըլլալով, նոր վարչութիւնը ընտրելու համար Ընդհանուր ժողովը պիտի գումարուի յառաջիկայ ուրբաթի զիշեր 27 յունվար ժամը ութին Ազգ. վարժարանի մէջ: Ուստի կը խնդրուի ընթերցարանիս բոլոր անդամներէն որ հաճին անձամբ ներկայ գտնուիլ:

Հայկ. Ընթ. առժամեայ Դիւան (Կնիք)
24 յունվար 1906
Վառնա

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ

Ի նպաստ Վառնայի Աղբ. Ընկերութեան:

Աղբ. Ընկ. Գործ. ժողովը նկատելով որ բաժանորդներէ հաւաքուած բաժնեգրներով կարելի չէ ընկերութեանս դիմող բոլոր ազգատ հիւանդաց օգնել ու օգտուելով քաղաքս գտնուող «Վէսլլո» Հայ թերասանական խումբին ներկայութենէն որոշեց ներկայացում մը տալ հինգշաբթի երեկոյ, 26 յունվար:

Հիայոյս ենք որ յարգոյ ազգայինը պիտի փութան ներկայ գլուխուել սոյն ներկայացման, որու արդիւնքը պիտի յատկացուի քաղաքիս բազմաթիւ հայ կարօտեալներուն:

Ի դիմաց Աղբ. Ընկ. Գործ. ժողովոյ Ատենապետ Ատենադպիր Ա. Զարպիսանէլեան Ս. Սամուէլեան (Կնիք)
23 Յունուար 1906
Վ Ա Ռ Ե Ա

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ասկէ առաջ ծանուցուած էր թէ՛ Մարդասէրներու և վարչապետներու ակումբ մը, Միացեալ Նահանգներու նախագահ պրն. Ռուզվելթին աղերս մը ուղղած են, խնդրելով անսոր աջակցութիւնը հայկական դատին համար:

Ռուզվելթը, այս կոչը հրատարակած է, և անոր հրատարակումովը, կուզէ պատրաստել ամերիկեան աղբին միջամտութիւնը և բարեացակամութիւնը:

Այս իսկ առթիւ, Սօֆիայաբնակ հայերը «Ստէսա» սրահին մէջ ժողով մը գումարած, ու այս մասին գաղափարներ փոխանակելէ ետքը շնորհակալութեան սրտագին հեռագիր մը քաշած են Միացեալ Նահանգներու Ատենապետին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գրէօզէ (Փրանսա) գործարանին ատաղձի աշխատանոցներուն մէջ, հրդեհ ծագելով ոչնչացուցած է պուլկարական բանակին սեպհական յանձնարարութեանց մեծագոյն մասը:

— Սօֆիայի քաղաքապետու-

թիւնը 35 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը կնքած է 5 Ո/0 տոկոս, 81 էմիսիօն (շրջաբերահան փոխարժէք) 50 տարիէն վճարելի է:

— Պուլկարական գահաժառանգ իշխան Պօրիսի ծննդեան 12րդ տարեդարձի առթիւ, երկրիս իշխանութեան պետը Ն. Ա. Բ. զ'Նի սպայութեան աստիճանին բարձրացուցած է:

— Իտալիոյ և Ֆրանսայի հետ կնքուած վաճառականական դաշնագրութիւնները որ երեսփոխանութեան ներկայացան, Գերմանական և Անգլիական դաշնագրութիւններէն աւելի ընդարձակ են: Ֆրանսացիները գիտցած են պաշտպանել իրենց շահերը, օրինակի համար անսուանի հաստատութիւններու արտադրած ըմպելիները և զիւրիները ու է մաքսային ձեւակերպութեանց և տարրալուծութեան չպիտի ենթարկուին: Իտալական դաշնագիրը անսուաններու, կաշիներու, և ուրիշ անսանական արտադրութեանց համար, անսանարուծական հսկիչ մարմին կը նախատեսէ:

Պուլկարիա բնակող, իտալահայտակ և ֆրանսահայտակ սնանկներու հաշիւներու յարգարումը պուլկարական դատարաններու գերիշխանութեան կը պատկանին:

Այս երկու պետութիւնները, յօդուածով մը կընդունին Սերպո—Պուլկարական մաքսային համաձայնութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բ. Դուռը, իր Պուլքէշի և Աթիւնայի ներկայացուցիչներուն հրահանգ տուած է, ռումանական և յունական կառավարութիւններէն հասկնալ, եթէ երբէք թըրքապուլկարական պատերազմ ծագի ի՞նչ գիրք պիտի բռնեն:

— Ամսոյս 20 ին Պոլսոյ հաղորդուածին նայելով, Վիէնային մասնադէտ բժիշկ մը կանչուած է՝ Սուլթանական գահաժառանգը խնամելու համար որ բաւական ծանր հիւանդ է եղեր:

— «Պէրլինէր Թակէպլաթ» լրագրի համաձայն, Բ. Դուռը խնդրած է պետութիւններէն որ Սերպո—Պուլկարական մաքսային համաձայնութեան խնդրով զբաղին և հաստատեն թէ՛ նա Պէրլինեան դաշնագրի տնօրինութիւններուն հակառակ է: Սուտրիօ—Հունգարիան Թուրքիոյ այս խնդրանքին ոյժ կուտայ, քիչ օրէն եւրոպական գահիճները այս մասին կարծիք պիտի փոխանակեն եղեր:

— Զօրավար Ֆէրիտ բաշայի

աստիճանին բարձրացումը, Պոլսոյ քաղաքական շրջանակներու մէջ մեծ տհաճութիւն պատճառած է:

Վեց պետութեանց դեսպաններու պահանջին վրայ, ուրկէ ամիսներ առաջ, այս զօրավարը Սելանիկի զինուորական կառավարչութենէ պաշտօնանկ եղած էր, որովհետեւ հիւպատոսական շատ մը տեղեկագրեր կը հաստատէին, անոր յունական չէթաներու օգնելը պուլկարներու դէմ:

— Բարձրագոյն վերաքննիչ ասեանը, երրորդ անգամ ըլլալով եզնական գատարանին արձակած վճիռը հաստատած է: Այս գատավճռին համաձայն, Ամերիկահայտակ, Աբիկ էֆ. Ունճեանի սպաննիչը, կարապետ վարդանանը մահուան կը դատապարտուի: Ամերիկեան գործակատարութիւնը գարձեալ նոր ընդօրգիր մը կը պատրաստէ այս գատավճռի մասին, և կը պնդէ որ վարդանանը Ամերիկեան հիւպատոսական գատարանին յանձնուի:

— Պուլսէն կիմացեն թէ՛ Եէ. մէնէն հասած լուրերը շատ գեշ են: Ֆէյզի փաշան ուզած է խուսափել, սակայն կարեւոր անյոյն զուլթիւններու հանդիպած է: Սանաաի մօտերը իր զինուորներուն 1/3 մասը ոչնչացած է: Մահմուտ բաշան մեծ ոյժով դէպի Սանաա հը գիմէ: Եթէ ժամանակին օգնութեան կարելի չըլլայ հասնիլ, Ֆէյզի բաշայի գրութիւնը յուսահատական է: Սուլթանին շուրջը գտնուողները շատ անհանգիստ են:

— Վիէնայի մէջ լուր կը շրջի թէ՛ Իտալիոյ և Զէրնակօրայի միջեւ, Ալպանիոյ և Մակեդոնիոյ մասին գաղտնի զինուորական դաշնագրութիւն մը կնքուած է: Զէրնակօրան բաւական կարեւոր պարտականութիւններ կը ստանձնէ ի դէպ Իտալա—Աւստրիական պատերազմի մը:

Թ Ո Ւ Ս Ս Ի Ա

Թիֆլիզէն վերջին հասած լուրերու համաձայն, յեղափոխականներու դէմ գործող զինուորականութեան հրամանատարը կիմացնէ թէ՛ շատ մը անգերու մէջ արդէն պատամբական շարժումները զսպում են:

Բնակչութիւնը տուրքերը վըճարելու և զօրահանութեան ցանկի համաձայն նոր զինուորներ տալ խոստացած է:

Վարչապայի բերդին մէջ հինգ հրէաներ հրացանի բռնուած են: Զինուորական գատարանը որպէս կառավարութեան դէմ գործող պոմպաճիներու բռնարարողները զանոնք մահուան դատապար-

տած էր: — Պատերազմական նախարարութեան ներկայացուցած վերջին ումանակրկիտ հաշիւներուն նախելով, ճարտական պատերազմը Ռուսիոյ համար 6 միլիար ֆրանքի հասած է:

Ինթերպուրկի ուստիկանապետը ժողովրդեան յայտարարած է թէ՛ 13 դեկտեմբերին արձակուած հրամանը, որով տնտեսական և քաղաքական հարցերու համար գումարուած համաժողովները կարգիլուէին, փոխուած է: Ասկէ վերջը ժողովուրդը կրնայ ազատուիլ ժողովներ գումարել, հոկտեմբեր 12 ի օրինագծին հետեւելով:

— Պոլսոյ գիրք կիմանայ թէ՛ կովկասի փոխարքայ անուանուելու է եղեր կրօտէզով զօրավարը:

— Վլատիվոսթոքին կիմացնեն թէ՛ վերջին ապստամբական շարժումի ժամանակ հոն, փոլոցի մէջ անուանի յեղափոխական Ֆալգէնշտայնը իր 4 ընկերներով միասին սպաննուած է: Կան և շատ մը ուրիշ մեռածներ և վիրաւորեալներ:

«—Տէյլի թէլէկրաֆ» լրագիրը Մոսկվայէն կիմանայ թէ, խռովութեանց ժամանակ շատ մը բողոքովին անմեղ, գործաւորներու կիներ սպաննուած են: Երբ մէկը նշմարուէր փողոցի մէջ ազատական լրագիր մը ձեռքը, անմիջապէս կըսպաննէին կամ կը բանտարկէին: Միայն սպայ մը 50 հոգի է աւելի մարդ սպաննած է:

— Ինթերպուրկէն կը հեռագրեն թէ՛ կառավարութիւնը յառաջիկայ խռովութիւններու առջեւ առնելու համար, որոշած է Սիպերիոյ երկաթուղիին երկայնութեան վրայ ամրութիւններ շինել:

«Սուլփո» լրագիրը կը յայտարարէ թէ՛ քիչ ուրէն հրամանագիր մը պիտի հրատարակուի, որուն տրամագրութեան համաձայն, կառավարութեան դէմ եղած որ և է յարձակում մահուամբ պատժուելու է:

Զօրավար Կրօտէզովը ծայրագոյն արեւելի փոխարքայ կարգուած է:

Քիչ օրէն գումօրուելիք հրէաներու համաժողովը, կառավարութիւնը արգիլած է:

— Կառավարական խոհարարտու Բուրգալացի Պիլիպովը, որ գրագէտ Կորոլենգոն դատի տուած էր, զինքը որպէս հակա-յեղափոխական շարժումներու դրդիչը ամբաստանած ըլլալուն համար, ամսոյս 21 ին վեցհարուածեանով սպաննուած է: